ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի /հայտերի բացման նիստ/

ք. Երևան «23» սեպտեմբերի 2017թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նիստը նախագահող՝

Սարգիս Արմենակյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Արմինե Ալիխանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Աղավնի Բուդուլյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Մհ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

Նիստից բացակայում էր՝

Էլյադա Արզաքանյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

Համաձայն ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի՝ նիստը նախագահում էր Սարգիս Արմենակյանը:

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/06» ծածկագրով ընթացակարգի ներկայացված հայտերի բացման մասին.

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2017թ.-ի սեպտեմբերի 23-ին, ժամը 10:00-ին:

2. Տեղեկություն՝ գնման առարկաների ընդհանուր գների վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գները՝ մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/
1.	Ֆլեշ հիշողություն, 32GB	101 200
2.	Ցանցային բաժանարար /սվիչ 8 պորտ/	133 000
3.	Սնուցման մարտկոց	900 000
4.	Սնուցման բլոկ	480 000
5.	Պլաստիկ քարտ	100 000
6.	Մալուխ՝ համակարգչի, UTP cable 6 level	99 680

3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	Հասցեն
«Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ	ք. Երևան, Նաիրի Զարյան 22 ա
«Էլիփս Ջիէյ» ՍՊԸ	ք. Երևան, Ն. Տիգրանյան 27
«Կոմպմարկետ» ՍՊԸ	ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ., 2ր շենք, 45 բն.
«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց 18/2
«Նորմա-պլյուս» ՍՊԸ	ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60
«Էկոմիքս» ՍՊԸ	ք. Երևան, Լենինգրադյան 31/1, բն. 28
«Վարմէքս» ՍՊԸ	ք. Երևան, Տիգրան Մեծ 46 4

Ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են հատազա գնահատման համար ընդունելի:

4. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը որոշեց Նիստը հետաձգել և հաջորդ Նիստը հրավիրել 2017թ. սեպտեմբերի 25-ին, ժամը՝ 11:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նիստը նախագահող՝ Սարգիս Արմենակյան

Անդամներ՝

Կարեն Մելքոնյան

Արմինե Ալիխանյան

Աղավնի Բուդոյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան